Հ. Բարսեղյան

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՆ-ԳՀԾՁԲ-23/19 2.148

«03» հոկտեմբեր 2019թ.

ք. Երևան

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Առսարքտեխ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ռոմպերի, կափույրների, ծորակների և մետաղական կոնտեյներների և սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

Կապալառու Հ. Պողոսյան

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը չպետք է գերազանցի.

1ին չափաբաժնով՝ 525 000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժնով՝ 899 760 (ութ հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	«Առսարքտեխ» ՍՊԸ
ք.Երևան-42, Ի. Գասպարյան 33	ՀՀ , ք. Երևան, Կ. Ուլնեցի փող. 1շ. 15բն
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.	հ/հ 1570015097750100
ՀՎՀՀ 01216144	ՀՎՀՀ 01002109
Գլխ. տնօրեն	Տնօրեն
_____Ա. Գասպարյան	----------Հ. Դոդոչյան
(ստորագրություն) Կ.Տ	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 1
«03 10 . 2019 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԾՁԲ-23/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50511900/2	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող վնասված մալուխների վերանորոգման անհրաժեշտության առաջացման դեպքում Կատարողը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացնի բարձր, ցածր լարման և բարձր հաճախականության կոքսիալ վնասված մալուխների թերությունների ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում փոխարինման ենթակա հանգույցների վերաբերյալ թերությունների ակտ: Պատվիրատուն թերությունների ակտը ստանալուց հետո, երկօրյա ժամկետում Կատարողին պետք է ներկայացնի իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը Կատարողի կողմից իրականացվելիք ծառայությունների վերաբերյալ: Ծառայությունների իրականացման առավելագույն ժամկետ է սահմանվում բարձր, ցածր լարման և բարձր հաճախականության կոքսիալ վնասված մալուխների վերանորոգման նպատակահարմարության գրավոր հաստատումից սկսած 5 աշխատանքային օրը: Բարձր, ցածր լարման և բարձր հաճախականության կոքսիալ վնասված մալուխների վերանորոգման համար անհրաժեշտ սարք	դրամ	525 000	1	Ի.Գասպարյան 33 ‘Հայաէրոնավիգացիա՝ ՓԲԸ	մինչև 31.12.2019

		սարքավորումների և փոխարինվող հանգույցների ապահովումը պետք է իրականացնի կատարողը:					
2	50531240/2	<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող 10կՎ օդային գծերի տեղակայման վայրերը՝ • Արմավիրի մարզ, Էջմիածնին հարակից Ոսկեհատ գյուղում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Արարատի մարզ, Հովտաշատ գյուղում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ փայտյա հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաքի հարակից տարածքում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Արագածոտնի մարզ, գյուղ Եղիպատրուշից դեպի Մռավյան օբյեկտ(2800մ բարձրություն) տեղակայված է 10կՎ օդային գիծ՝ փայտյա և մետաղյա հենասյուներով, AC70 հաղորդալարերով: • Կոտայքի մարզ, գյուղ ֆանտանին հարակից գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ	դրամ	899760	1	1.Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ 2.Արարատի մարզ,, գ. Հովտաշատ 3.Գեղարքունիքի մարզ, ք. Սևան 4.Արագածոտնի մարզ, գ. Եղիպատրուշ	մինչև 31.12.2019

		գծային բաժանիչով: Վթարի դեպքում սպասարկող ընկերությունը պարտավոր է 24 ժամվա ընթացքում սկսել վերանորոգման աշխատանքները: Վթարի դեպքում հնարավոր վերականգնողական աշխատանքների տեսակները՝ • Հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր բետոնե հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյուներին(մինչև 100մ): • Հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր փայտյա հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյուներին(մինչև 100մ): • A-տիպի վերջնային խարսխային հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր բետոնե A-տիպի վերջնային խարսխային հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյունը(մինչև 50մ): • A-տիպի վերջնային խարսխային հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր փայտյա A-տիպի վերջնային խարսխային հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյունը(մինչև 50մ): • Մռավյան օդային գծի ACO-10 և ПСМ-10 հենասյուների վրա գտնվող ПС-10 մեկուսիչ շարանի փոխարինում նորով՝ 6 հատ և AC70 հաղորդալարի մոնտաժում նորով՝					

		դեպի հարակից հենասյուներին(մինչև 100մ): Գյուղ Եղիպատրուշից Մռավյան օբյեկտ տանող ճանապարհին ձյան առկայության դեպքում <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն կտրամադրի հատուկ տեխնիկա՝ իր վառելիքով: <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող վնասված օդային գծերի վերանորոգման անհրաժեշտության առաջացման դեպքում Կատարողը 1 օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացնի թերությունների ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում փոխարինման ենթակա հանգույցների գների վերաբերյալ թերությունների ակտ: Պատվիրատուն թերությունների ակտը ստանալուց հետո, մեկօրյա ժամկետում Կատարողին պետք է ներկայացնի իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը Կատարողի կողմից իրականացվելիք ծառայությունների վերաբերյալ: Ծառայությունների իրականացման առավելագույն ժամկետ է սահմանվում 3 աշխատանքային օրը: Փոխարինվող նյութերի և հանգույցների ապահովումը պետք է իրականացնի Կատարողը:					

Պատվիրատու
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144

Գլխ. տնօրեն

_____Ա. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Առսարքտեխ» ՍՊԸ
ՀՀ , ք. Երևան, Կ. Ուլնեցի փող. 1շ. 15բն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570015097750100
ՀՎՀՀ 01002109

Տնօրեն

---------- Հ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«03» 10. 2019 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀՇՁԲ-23/19 ծածկագրով պայմանագրի

Ծառայությունների մատուցման գնացուցակ

ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Մեկ միավորի գին /տառերով և թվերով/*
1	Բարձր լարման մալուխ՝ Մեկ հատ բարձր կամ ցածր լարման մալուխի վնասված հատվածի վերոնորոգում (2 կցորդիչների տեղադրմամբ)	250 000 Երկու հարյուր հիսուն հազար	50000 Հիսուն հազար	300000 Երեք հարյուր հազար
	Ցածր լարման մալուխ՝ Մեկ հատ բարձր կամ ցածր լարման մալուխի վնասված հատվածի վերոնորոգում (2 կցորդիչների տեղադրմամբ)	125000 Հարյուր քսանհինգ հազար	25000 Քսանհինգ հազար	150000 Հարյուր հիսուն հազար
	Կոաքսիալ մալուխ՝ Մեկ հատ բարձր հաճախականության կոաքսիալ (համառանցք) մալուխի վերանորոգում (վերամբարձ աշտարակով)	62500 Վաթսուներկու հազար հինգ հարյուր	12500 Տասներկու հազար հինգ հարյուր	75000 Յոթանասունհինգ հազար
Ընդամենը		437500 Չորս հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր	87500 Ութսունյոթ հազար հինգ հարյուր	525000 Հինգ հարյուր քսանհինգ հազար
2	Հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր փայտյա հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյուներին (մինչև 100մ):	125000 Հարյուր քսանհինգ հազար	25000 Քսանհինգ հազար	150000 Հարյուր հիսուն հազար
	A-տիպի վերջնային խարսխային հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր բետոնե A-տիպի վերջնային խարսխային հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր	166600 Հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր	33320 Երեսուներեք հազար երեք հարյուր քսան	199920 Հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսան

	դեպի հարակից հենասյունը (մինչև 50մ)			
	Ա-տիպի վերջնային խարսխային հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր փայտյա Ա-տիպի վերջնային խարսխային հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյունը (մինչև 50մ):	166600 Հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր	33320 Երեսուներեք հազար երեք հարյուր քսան	199920 Հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսան
	Հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր փայտյա հենասյուն և մոնտաժել նոր հաղորդալարեր դեպի հարակից հենասյուներին (մինչև 100մ):	125000 Հարյուր քսանհինգ հազար	25000 Քսանհինգ հազար	150000 Հարյուր հիսուն հազար
	Մռավյան օդային գծի ACO-10 և ПСМ-10 հենասյուների վրա գտնվող ПС-70 մեկուսիչ շարանի փոխարինում նորով՝ 6 հատ և AC 70 հաղորդալարի մոնտաժում նորով՝ դեպի հարակից հենասյուներին (մինչև 100մ)	166600 Հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր	33320 Երեսուներեք հազար երեք հարյուր քսան	199920 Հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսան
	Ընդամենը	749800 Յոթ հարյուր քառասունինը հազար ութ հարյուր	149960 Հարյուր քառասունինը հազար ինը հարյուր վաթսուն	899760 Ութ հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր վաթսուն

Պատվիրատու
«Հայէլեկտրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144

Գլխ. տնօրեն

_____ Ա. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Առսարքտեխ» ՍՊԸ
ՀՀ , ք. Երևան, Կ. Ուլնեցի փող. 1շ. 15բն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570015097750100
ՀՎՀՀ 01002109

Տնօրեն

---------- Հ. Ղոնդոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«03» 10. 2019 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԾՁԲ-23/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50511900/2	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ բարձր և ցածր լարման վնասված մալուխների նորոգում										փաստացի	փաստացի	փաստացի	ոչ ավել քան 525 000
2	50531240/2	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ բարձր լարման օդային գծի և հենասյուների նորոգման ծառայություններ										փաստացի	փաստացի	փաստացի	ոչ ավել քան 899 760

Պատվիրատու
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144

Գլխ. տնօրեն

_____Ա. Գասպարյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Առսարքտեխ» ՍՊԸ
ՀՀ , ք. Երևան, Կ. Ուլնեցի փող. 1շ. 15բն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570015097750100
ՀՎՀՀ 01002109

Տնօրեն

----------Հ. Պողոսյան
/ստորագրություն/

Հավելված 3
«03» 10. 2019 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԾՁԲ-23/19 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«03» 10. 2019 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀՇՁԲ-23/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն